ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/50

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2 հունիսի 2021 թ. N 50

ԼՈՌՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հերացու 11
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021թ. հունիսի 2-ին Հանձնաժողովի նիստում քննարկեց Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՄՈւՀ, ԼՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	17 հուլիսի 2020
ինքնավերլուծության ներկայացում	28 հոկտեմբերի 2020
փորձագիտական այցի իրականացում	30 նոյեմբերից 3 դեկտեմբեր 2020
փորձագիտական զեկույցի ներկայացում	1 փետրվարի 2021
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	12 փետրվարի 2021

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 5-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»**, գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Առկա են խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ ևս առկա են***

Քոլեջի ՄԿԾ-ները համահունչ են քոլեջի առաքելությանը, կառուցվածքային և բովանդակային առումով համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մոդուլային մուտքային պահանջները հիմնականում պահպանվում են: Սակայն քոլեջը կողմից, հաշվի առնելով տարածաշրջանի և աշխատաշուկայի պահանջները, ՄԿԾ-ները չեն տեղայնացվել, չեն ենթարկվում վերանայման և բարելավման. առկա է գործնական բաղադրիչի պակաս, ծրագրում նշված պահանջները հիմնականում կրկնում են պետական չափորոշիչների պահանջները, տեսական ուսուցման իրականացման կազմակերպումը կատարվում է ոչ արդիական նյութերով: Բացակայում են ՄԿԾ–ների արդյունավետ իրականացման վերահսկման մեթոդները, արտացոլված չեն ուսումնական գործընթացի դասավանդման հստակ մեխանիզմներ և քաղաքականություն. դասապրոցեսը իրականացվում է ըստ դասախոսների անհատական մոտեցման: Մեթոդների ընտրության ազատականացված մոտեցումը չի երաշխավորում վերջնարդյունքների լիարժեք ձևավորումը:

Քոլեջն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, որի համալրման և սերնդափոխության ուղղությամբ հստակ մեխանիզմներ են գործում: Կազմակերպվում են մասնագիտական վերապատրաստումներ, կատարվում են գնահատումներ, սակայն այս գործընթացները դեռևս ամբողջական չեն և ունեն բարելավման կարք:

Քոլեջն ապահովված է կրթական պրոցեսի կազմակերպման համար համապատասխան՝ նյութատեխնիկական բազայով, շենքային պայմաններով, որի ուղղությամբ տնօրենությունը համապատասխան միջոցներ է տրամադրում:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՄՈՒՀ-ի ռազմավարական խնդիրների առաջադրման միակ մարմինը ԼՏՊՔ խորհուրդն է, սակայն իր գործառույթն իրականացնելու հարցում այնքան էլ հետևողական չէ: Հստակ ձևակերպված և չափելի նպատակների բացակայության պայմաններում կառավարման համակարգի ռեսուրսներն

օգտագործվում են առօրյա, ընթացիկ աշխատանքների վրա: Հստակ չէ քոլեջի ռազմավարական կառավարում իրականացնելու ցանկությունը:

ՄՈՒՀ-ն իրականացնում է ուսանողների հավաքագրման և կայունության ապահովման հստակ գործընթացներ, սակայն չկան ուանողների կարիքների վերհանման մեխանիզմներ: Ուսանողների մասնակցությունը որոշումների կայացման հարցում բացակայում է:

ՄՈՒՀ-ն ունի Որակի ապահովման համակարգ, քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն դրանք դեռևս ներդրված չեն: Քոլեջի վարչական կազմի կողմից, որպես գործընթացների բարելավման գործիք ՈԱ առանձին համակարգ չի դիտարկվում, և գործընթացները չեն իրականացվում «պլանավորում–իրականացում–գնահատում-բարելավում» շրջափուլով: Կառավարման գործընթացներին որակի շրջափուլի սկզբունքով վերաբերվելու մշակույթ դեռևս ձևավորված չէ, խիստ վտանգում է համակարգի գործունեությունը: ՈԱ համակարգի ներդնումը դեռևս նախնական փուլում է՝ պրակտիկորեն այն չի գործում: Վերջինիս գործունեությունը դեռևս չի կարևորվում, օգտակարությունը չի գիտակցվում:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.

Արտաքին կապերի և միջազգայնացման հարցերում ՄՈՒՀ-ը շատ անելիքներ ունի, մասնավորապես, բենչմարքինգի իրականացման հարցում: Անհրաժեշտություն կա գնահատելու սեփական կարիքներն այդ ոլորտում, կարևորելով միջազգային կապերի ընդլայնումը, որը քոլեջը կդարձնի ավելի ժամանակակից և պահանջված աշխատաշուկայում:

Քոլեջի անելիքները հետազոտական ոլորտում ահռելի են. այս ուղղությունը պրակտիկորեն բացակայում է: Չկան հետազոտական աշխատանքի կիրառելիության բաղադրիչներ, որի ճիշտ կազմակերպման պարագայում օգտակար կլիներ թե՛ ՄՈՒՀ-ի, և թե՛ արտաքին շահակիցների համար:

Քոլեջը չունի հետազոտական ոլորտում հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն: ՊԴ կազմը և ուսանողները ներգրավված չեն հետազոտական/ստեղծագործական աշխատանքներում, չկան վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանն ուղղված գործընթացներ, ինչպես նաև՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Քոլեջում դեռևս աշխատանքներ չեն տարվում միջազգայնացման ուղղությամբ, բացակայում է արտաքին կապերի արդյունավետության գնահատումը, որը խոչընդոտում է զարգացմանն ու առաջխաղացմանը, իսկ արտաքին կապերի ոլորտում իրականացված աշխատանքները շատ թույլ են:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունները քոլեջի կողմից ենթարկվել են խմբագրման՝ բովանդակային փոփոխության: Այսպիսով՝ ծրագրով սահմանված ակնկալվող արդյունքների մեծ մասը չի համապատասխանում փորձագիտական խմբի կողմից սպասվող արդյունքներին: Բացակայում են արդյունքների ձեռք բերման համար նախատեսված իրատեսական ռեսուրսներն ու իրականացման ժամկետները: ԼՏՊՔ-ի բարելավման ծրագիրն իր մեջ ռիսկեր է պարունակում և վերանայման անհրաժեշտություն կա:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Լոռու պետական տարածաշրջանային քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - կառավարման համակարգի, ընթացակարգերի կանոնավոր գնահատման և բարելավման մեխանիզմներ ունենալու պահանջը,
   - քոլեջում վերլուծական, քննադատական, ինքնաքննադատական մտածելակերպի ձևավորմանը,
   - ՄԿԾ-ների վերանայման և տեղայնացման անհրաժեշտությունը, ՄԿԾ-ների իրականացման գործընթացում ներդնել քոլեջի տարբեր միջազգային ծրագրերում ներգրավված լինելու փորձը,
   - դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն ունենալու ամիրաժեշտությունը,
   - քոլեջի կողմից կազմակերպվող գործընթացները առավել կանոնակարգված և կոլեգիալ հիմունքներով իրականացմանը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել՝**
   - ՄԿԾ – ներում հետազոտական բաղադրիչի ներդրմանը,
   - Որակի ներքին ապահովման համակարգի լիարժեք գործունեությանը, որի արդյունքում լուծում կստանան այն բացերը, որոնք առկա են գրեթե բոլոր ոլորտներում,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - Որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը :
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին՝ պարտադիր մշտադիտարկման ենթարկել Լոռու պետական տարածաշրջանային քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
Նախագահ՝ **Ա. Սաղյան**
2021 թ., հունիսի 2
ք.Երևան